ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

2017թ. սեպտեմբերի 29

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), խորհրդի նախագահ Ա.Ասատրյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Թամարա Աբրահամյան	«Արազա» ԲՀԿ
Լալա Տեր-Ղազարյան	«Պանորամա Էյեմ» ՍՊԸ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի Գրասենյակ ՀԿ
Շողինե Սողոմոնյան	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Տիգրան Պետրոսյան	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Աշոտ Քոչարյան	«Սօս մանկական գյուղեր» ԲՀԿ
Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Արայիկ Հայրապետյան	Ֆիզիկական անձ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)
Հրավիրված էին և մասնակցում էին՝

Արայիկ Պետրոսյան	Նախարարի առաջին տեղակալ
Սոնա Հարությունյան	Նախարարի տեղակալ
Թադևոս Ավետիսյան	Նախարարի տեղակալ
Դավիթ Հակոբյան	Նախարարի խորհրդական
Անուշ Դանիելյան	Նախարարի մամուլի քարտուղար
Ռուզաննա Պեպանյան	Նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչություն

Լուսինե Հարությունյան	Նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչություն
Արամ Պետրոսյան	Նախարարության աշխատակազմի իրավական ապահովման բաժնի պետ
Սիրանուշ Զաքարյան	Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Բացակայում էին՝
Խորհրդի անդամներ

Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ
Արթուր Սարգսյան	«Աշխատանքի իրավունքի պաշտպանի գրասենյակ» ՀԿ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Գոռ Աբրահամյան	«Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ
Աիդա Մուրադյան	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ
Աննա Մնացականյան	ֆիզիկական անձ
Սյուզաննա Բադոյան	ֆիզիկական անձ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում**
   (ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ Թ. Ավետիսյան)

2. **Կայուն զբաղվածության պետական ակտիվ ծրագրերի շրջանակում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման մասնակցային մոնիթորինգի զեկույց**
   («Արազա» ԲՀԿ նախագահ Թամարա Աբրահամյան, փորձագետ Նարինե Մաիլյան)

3. **Այլ հարցեր**

Մինչ օրակարգին անդրադառնալը՝ Նախագահը ողջունեց հասարակական խորհրդի անդամներին, նշելով, որ նախորդ նիստում ձեռք բերված պայմանավորվածությունը՝ ֆիքսելու խորհրդի նիստի անցկացման ժամկետները, կարծում եմ ճիշտ է և մենք արդեն մեր օրակարգն ենք համապատասխանեցնում կայացված որոշումներին և մտել ենք ավելի աշխատանքային հստակ գրաֆիկի մեջ: Այնուհետև նախագահողն անդրադարձավ նիստ օրակարգի նախագծին:

Նիստի օրակարգի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չներկայացվեցին: Նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:

1. **«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացում**

Անցնելով օրակարգի առաջին հարցին՝ նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանը նշեց, որ 2017թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը և վերջինիս միջոցով նշագրված առանցքային կարգավորումների հիման վրա մշակվել և սահմանված կարգով նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել վերոնշյալ օրենքի նախագիծը: Այնուհետև հավելեց, որ կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը, որպես ազգային և միջազգային տնտեսության զարգացմանը նպաստող կարևորագույն ռեսուրս, հստակ կարգավորված է աշխարհի մի շարք երկրներում:

Կարևորելով կամավորի ինստիտուտի օրենսդրական համապարփակ կարգավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև հիմք ընդունելով քաղաքացիական հասարակությունում ներկա զարգացումներն ու մարտահրավերները՝ նախագիծը բավականին երկար մշակման փուլերով է անցել: Միջազգային փորձի մանրակրկիտ ուսումնասիրության, կամավորական գործունեության համար խթանիչ հիմքերի ապահովման և համակարգված կարգավորումների ներդրման նպատակով եղել են փուլային, աշխատանքային քննարկումներ տարբեր հասարակական կազմակերպությունների փորձագետների հետ: Նախագծի մշակման նախնական փուլում աշխատանքային խումբը միջազգային պրակտիկայում գործող և դրական արդյունքներ ապահովող մի շարք մոդելներ, մեխանիզմներ է ուսումնասիրել:

Ուսումնասիրված երկրների փորձը ցույց է տվել, որ օրենսդրական բազայի բացակայությունը կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի համար գործնականում բերում է էական խոչընդոտների, իսկ այն երկրներում, որտեղ կան կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի ամուր ձևավորված ազգային ավանդույթներ, կամավորական գործունեությունն և կամավոր աշխատանքը պաշտպանված են օրենքով:

Նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանը ընդգծեց, որ

- Միջազգային կազմակերպությունների վերջին վիճակագրությամբ աշխարհի բնակչության 20.8%-ը ներգրավված է կամավորական աշխատանքներում,
- Երկրորդ կարևոր հատկանիշ է այն հանգամանքը, որ համաշխարհային ՀՆԱ-ի 3.1%-ը կամավորական գործունեության արդյունքում է ստեղծվում,
- Որպես 3-րդ կարևոր սկզբունք առանձնացվեց Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակադրումները, որին նաև միացել է Հայաստանի Հանրապետությունը: Այդ նպատակադրումներին հասնելու համար էապես կարևորվում է կամավորական գործունեությունն ու կամավոր աշխատանքը, ինչպես նաև պետության դերը, որպես կամավորական գործունեությունն աջակցողի, այդ հարաբերությունները կարգավորողի և խրախուսողի:

Այնուհետև նշեց, որ այս ամբողջի համատեքստում Նախագծով տրվել է հետևյալ հիմնական հարցերի և խնդիրների լուծումներն ու կարգավորումները.

- Կամավորական գործունեության և կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերություններն աշխատանքային հարաբերություններից, ինչպես նաև կամավոր

աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու լիարժեք իրավական կարգավորումները,

- Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքների կատարման սահմանափակումներն ու առանձնահատկությունները, փոխհարաբերությունների պայմանագրային կարգավորումները,
- Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքների կատարման բնագավառների և աշխատանքների հստակ շրջանակը,
- Կամավոր աշխատանքի ընթացքում կատարված ծախսերի փոխհատուցման մեխանիզմներն ու կամավոր աշխատանքի հետ կապված իրավական, սոցիալական, ինչպես նաև այլ երաշխիքներ:

Այնուհետև Թ. Ավետիսյանը անդրադառնալով նախագծի շրջանակներում օգտագործվող հետևյալ հիմնական հասկացություններին.

- Կամավոր
- Կամավորական կազմակերպություն
- Կամավոր ներգրավող կազմակերպություն
- Անհատի կամ խմբի կողմից ինքնուրույն կատարվող կամավորական աշխատանք

Այս սուբյեկտների շրջանակներում էապես պետք է կարևորել պետության դերը, որպես կամավորական գործունեությանն աջակցող, այդ թվում՝ մեթոդական, ծրագրային, տեղեկատվական աջակցություն ցուցաբերող, կամավորներին հաշվառող, այս հարթակն ապահովող, խրախուսող և այլն: Միաժամանակ նշեց, որ խրախուսման ձևերը և մեթոդները վերցվել են միջազգային պրակտիկայից և «Բարեգործության մասին» ՀՀ օրենքից:

Զեկուցողը հավելեց, որ վերջերս քննարկում են ունեցել «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և նախարարության կողմից հրավիրված միջազգային փորձագետների հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել այնպիսի կարևորագույն հարցերին, ինչպիսիք են՝

- Կամավորական պայմանագիր անհրաժեշտ է, թե՝ ոչ: Այս հարցին անդրադառնալով նախարարի տեղակալը հավելեց, կամավորական գործունեությունն պետք է ամրագրվի պայմանագրով, իսկ 20 օր ավելիի դեպքում կամավորական պայմանագիրն որոշակի սահմանափակում է նախատեսում, որտեղ էլ պետք է ամրագրվեն կողմերի իրավունքներն ու պարտականությունները.
- Կամավորի տարիքի սահմանափակում կա, թե՝ ոչ և ովքեր կարող են կամավորական գործունեությամբ զբաղվել.
- Հաշվետվողականության մեխանիզմ է դրված: Կամավորական կազմակերպությունը պետք է տարեկան պարբերականությամբ հաշվետվություն ներկայացնի պետական լիազոր մարմին.
- Կամավորական գործունեության ժամանակ պետք է հստակ կարգավորվեն դժբախտ դեպքերից և որոշակի այլ ռիսկերից ապահովագրական հարցերը:

Ի վերջո կամավորական գործունեությունն ու կամավոր աշխատանքը կամավորության վրա հիմնված, հասարակական նշանակություն կամ սոցիալական ուղղվածություն ունեցող, հանրօգուտ, անվարձահատույց գործունեություն է կամ աշխատանք, որի հետ կապված հարաբերություններն որոշակիորեն կարգավորված են ՀՀ օրենսդրությամբ, սակայն դեռևս առկա են օրենքով կարգավորման ենթակա խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ոլոտի կայացմանն ու հետագա զարգացմանը:

Նախագծում կան նաև որոշակի կարգավորումներ կամավորական աշխատանքներում ներգրավման ցանկություն ունեցող առանձնահատուկ խմբերի համար, օրինակ՝

- Հղի կանայք, մինչև երեք տարեկան երեխան խնամող անձիք
- Հաշմանդամություն ունեցող անձիք և այլն:

Այս պարագայում վերջիններիս կյանքի, առողջության և ընդհանրապես մյուս իրավունքների իմաստով Նախագծում համադրելի կարգավորումներ են առաջարկվում:

Ամփոփելով իր խոսքը, Թ. Ավետիսյանը հավելեց, որ Նախագիծը տեղադրված է իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական կայքում: Այնուհետև նշեց, որ ստացել են որոշակի կարծիքներ, որի շրջանակներում քննարկումներ են ունեցել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, հաջորդ շաբաթ մասնագիտական քննարկումներն առավել մանրամասն՝ հոդված առ հոդված շարունակվելու են, որի ընթացքում կդիտարկվեն Խորհրդի կողմից ներկայացված առաջարկություններն առավել հանգամանալից:

Առաջին հարցի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչեցին տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

Աննա Եղիազարյանը նշեց, որ կամավոր կազմակերպության և կամավոր ներգրավող կազմակերպության տարանջատումը անհասկանալի է, քանի որ իրենք լինելով միջազգային կազմակերպության ներկայացուցիչ և՝ կամավորներ են ներգրավում, և՝ կամավոր կազմակերպություն են: Այնուհետև հավելեց, որ այն փորձը, որն ունի «Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ-ն, թույլ է տալիս շատ հստակ պատկերացնելու կամավոր գործունեությունը: Միաժամանակ ընդգծեց, որ աշխատակազմի նկատմամբ 5%-ի սահմանափակումը չի խրախուսվում կազմակերպության կողմից և այն անընդունելի է, քանի որ կազմակերպությունն ունի շատ փոքր աշխատակազմ, բայց կամավորների մեծ բանակ: Այդ սահմանափակումը շատ մեծ խոչընդոտ կարող է հանդիսանալ կազմակերպության հետագա գործունեության համար:

Անդրադառնալով Աննա Եղիազարյանի հարցին՝ Թ Ավետիսյանը նշեց, որ սահմանափակման հիմնական նպատակն այն է, որ ստեղծվի որոշակի լիարժեք իրավական կարգավորումներ, այսինքն՝ կամավոր աշխատանքի անվան տակ չխթանվի անօրինական աշխատանքը: 5%-ի սահմանափակումը ոչ թե անձնակազմի թվաքանակին է վերաբերվում, այլ անձնակազմում վարչական աշխատողների թվին է վերաբերում և, որպես վարչական աշխատանքներ կատարող մարմին, թույլատրելի է, որ 5%-ից ոչ ավելի լինեն կամավորներ:

Այնուհետև հավելեց, որ վերոնշյալ հարցը կրկին կքննարկվի շահագիգիռ մարմինների հետ, սակայն սահմանափակման մասով պետք է գտնել կոմպրոմիսային լուծումներ, քանի որ բացարձակ չկարգավորելը խթանիչ կարգավորում չէ միանշանակ:

Իսկ ինչ վերաբերվում է կամավոր կազմակերպության և կամավոր ներգրավող կազմակերպության տարանջատմանը, ապա դրանք իրականում էապես տարբերվում են օրենքի նախագծով:

Կամավոր կազմակերպությունը ներգրավում է կամավորներ, կազմակերպում կամավորական տարբեր ակցիաներ: Այսինքն՝ կամավոր կազմակերպությունը դոմինանտ սուբեյկտ է և բոլոր հարաբերությունների մասով կարող է ներգրաված լինել իր կամավորներին, իր ակցիաների շրջանակներում իրականացվող աշխատանքներում կարող է ներգրավել կամավոր ներգրավող կազմակերպությանը կամ դրանք ինքնուրույն անել:

- Կամավոր ներգրավող կազմակերպությունը կարող է չլինել հասարակական կազմակերպություն և ունենալ բոլորովին այլ իրավակազմակերպչական ձև, օգտվել

անհատ կամավորների ծառայություններից կամ կամավորական կազմակերպության օժանդակությունից: Օրինակ՝ մանկատունը կարող է ներգրավել կամավորներ և հանդիսանալ կամավոր ներգրավող կազմակերպություն:

Աննա Եղիազարյանը կրկին չհամաձայնվեց Թ. Ավետիսյանի կողմից ներկայացված կամավոր կազմակերպության և կամավոր ներգրավող կազմակերպության տարանջատման և 5%-ի սահմանափակման հարցադրումների պարզաբանմանը;

Թ. Ավետիսյանը հավելեց, որ անհրաժեշտ է ներկայացնել առաջարկություններ և խնդիրների լուծման հնարավոր տարբերակներ, որոնք համատեղ քննարկման արդյունքում կհստակեցվեն և կներառվեն օրենքի Նախագծում:

Նախարարը նշեց, որ բոլոր ցանկություն ունեցողների հետ պատրաստ են մասնագիտական քննարկումներ իրականացնել. եթե կլինեն կոնկրետ առարկայական հարցադրումներ և առաջարկվող լուծումներ և առաջարկեց առաջարկությունները և ձևակերպումները առավել հակիրճ և հասկանալի:

Այնուհետև Սուսաննա Թադևոսյանն օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրեց հետևյալ հարցերը՝

1) Եթե կազմակերպությունը կարող է ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց և օրենքով սահմանված կարգով կնքել պայմանագրեր, արդյոք տվյալ կազմակերպությունը կարող է օգտվել զբաղվածության ոլորտի աշխատատեղերի հարմարեցման ծրագրից՝ հարմարեցնելով աշխատատեղը տվյալ հաշմանդամություն ունեցող անձին, որը պատրաստ է կամավորական աշխատանք կատարելուն.
2) Օրենքն անդրադառնում է կամավորական աշխատանքի խրախուսմանը, սակայն կամավորներին ինչ արտոնություններ է տալիս,
3) Նախկինում նման դեպքեր եղել են, երբ կամավոր կազմակերպությունն աշխատողի հետ պայմանագիր է կնքել, սակայն աշխատավարձ չվճարելով հանդերձ պարտավորվել է նվազագույն աշխատավարձի հաշվով եկամտահարկ վճարել: Նման ռիսկերը օրենքով կարգավորված են, թե՝ ոչ:

Առաջին հարցին անդրադառնալով Թ. Ավետիսյանը նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման դեպքում աշխատանքի հարմարեցման ծրագիրը չի կարող օգտագործվել, որովհետև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով տվյալ անձը պետք է ընդունվի աշխատանքի և ստանա եկամուտ, այսինքն՝ աշխատավարձ, իսկ այս աշխատանքը անվարձահատույց է: Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ Նախագծով այլ կարգավորումներ է առաջարկվում, որի շրջանակներում պետք է հաշվի առնվեն տվյալ անձանց իրավունքները, օրինակ՝ առողջական վիճակ, սահմանափակվածություն, ծանր աշխատանքներ, որոնք վնասում են հաշմանդամների առողջությանը, հետևաբար դրանք թույլատրելի չպետք է լինեն:

Երկրորդ հարցին անդրադառնալով Թ. Ավետիսյանը նշեց, որ Նախագծով մի շարք խրախուսման ձևեր են ամրագրվում, ավելի շատ բարոյական և հետագայում ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ավելի կհստակեցվեն դրանց տրամադրման կարգերը:

Մյուս կարևոր խթանը այն է, որ երիտասարդ կամավորները հնարավորություն են ստանալու իրացվելու մասնագիտական առումով, այսինքն՝ այսօր աշխատաշուկայում, ինչպես նաև միջազգային պրակտիկայում երիտասարդների հիմնական խնդիրը առաջին մասնագիտական փորձի պակասն է կամ բացակայությունը: Նախագիծը հաշվետողականության համակարգված սխեմա է առաջարկում, ձևավորվելու է տեղեկատվական շտեմարաններ, որը պարտավոր է վարել լիազոր մարմինը: Այդ տեղեկատվությունը ժամանակի ընթացքում հավաքագրվելու է և պահպանվելու:

Հետևաբար անձի կողմից ապագա գործատուին կամավոր կազմկերպության կողմից ներկայացված տեղեկանքը էապես տարբերվելու է պետական լիազոր մարմինի կողմից ներկայացված տեղեկանքից:

Իսկ արտոնություններին անդրադառնալով նշեց, որ դրանք հետագայի՝ 2-րդ փուլի և նաև այլ օրենքներով կարգավորման հարցեր են, ինչպես օրինակ՝ ուսումնական հաստատություն ընդունվելուց արտոնություն, ուսման վարձի զեղչի արտոնություն, առաջնահերթ զբաղվածության ծրագրերում ներառման արտոնություն և այլն:

Երրորդ հարցի վերաբերյալ Թ. Ավետիսյանը նշեց, որ նմանատիպ հարցադրումներ բազմաթիվ անգամ ստացել են և այն հիմնարար խնդիրներից մեկն է , որը փորձելու են լուծել: Այս Նախագծի ընդունման պարագայում այդ տիպի հարաբերությունները ամբողջությամբ կարգավորված են և հստակեցված: Եթե որևէ կազմակերպություն օրենքով սահմանված կարգով ունի կնքված պայմանագիր և վարում է համապատասխան հաշվառման մատյան, այնտեղ նշված տեղեկատվությունը լիազոր մարմնին է տրամադրում, ապա հետագայում վարչական մարմնի որոշմամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դատական կարգով կպաշտպանվի կամավոր կազմակերպության շահերը:

Այնուհետև նիստը նախագահողը դիմեց խորհրդի անդամներին հետևալ հարցով. Արդյո՞ք խորհրդի անդամները գտնում են, որ այս ոլորտում օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն կա և ստացավ բոլորի կողմից «Այո՝, միանշանակ կա» պատասխանը: Եթե կա հարցը կարգավորելու օրենսդրական անհրաժեշտություն, որին ես էլ եմ կողմ, շարունակեց նախագահողը, ապա խորհրդի անդամների առաջարկությունները, առարկություններն ու մտահոգություններն հաշվի առնելով՝ մենք պատրաստ ենք դրանք հավաքագրել, մանրակրկիտ ուսումնասիրել և բոլոր հարցադրումներին առարկայական հնարավոր լուծումներ տալու նպատակով կազմակերպել մասնագիտական քննարկումներ և դրանից հետո ամփոփելով, ի մի բերելով Նախագիծը լրամշակելուց հետո միայն այն ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

Տիգրան Պետրոսյանը նույնպես անդրադարձավ օրենքի նախագծով նախատեսված սահմանափակումներին, որոնք կարող են չխթանել կամավորական գործունեությունը, նշելով որ ՀՀ-ում կամավորական փիլիսոփայության ընկալման խնդիր կա: Միջազգային փորձի հետ համեմատելով մեզ մոտ կամավորականության ձևակերպումը թե՝ որակապես, թե՝ մասնագիտական հմտությունների և թե՝ տարիքային առումով էապես տարբերվում է եվրոպական շատ երկրներից: Եվրոպական երկրներում ավելի շատ են խրախուսում երիտասարդների մուտքը կամավորական գործունեության ասպարեզ, քան Հայաստանում:

Նախագահը կրկին նշեց, որ բոլոր նշված մտահոգությունները, դիտարկումները, պետք է դառնան առաջարկություններ, որպեսզի ավելի կոնկրետ և առարկայական լուծում ստանան:Նախագահը ընդգծեց, որ Նախագծում հստակ կարգավորումների, ճիշտ ձևակերպումների խնդիր կա, այն հաշվով, որ դրանք բոլորի կողմից ընկալվեն միատեսակ, որն էլ միայն մասնագիտական քննարկումների արդյունքում լուծում կստանա: Մենք դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու այս ասպարեզում, որպեսզի կայանանք և համապատասխանենք եվրոպական չափանիշներին թե՝ կամավորի ինստիտուտի ներդրման, թե՝ պետության սոցիալական, հասարակական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն աջակցելու, թե՝ փոխօգնության, գթասրտության մթնոլորտի ձևավորման, բնակչության կյանքի որակի բարձրացմանն ու կենսակերպի բարելավմանն աջակցելու և թե՝ ինքնակազմակերպվող ու քաղաքացիական ակտիվ հասարակություն ձևավորելու հարցերում:

Նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանը նշեց, որ հիմնական մտահոգությունն այն է, որ չմեծանա անօրինական աշխատանքի ռիսկը, այսինքն օրենքը

կամավոր աշխատանքի անվան տակ չխթանի անօրինական աշխատանքի օրինականացնելուն և այդ մտահոգություններից ելնելով ամրագրել ենք վերոնշյալ սահմանափակումները:

Նաիրա Առաքելյանը նշեց, որ այս Նախագիծն ընդունելով այն չպետք է հանգեցնի նրան, որ անօրինական աշխատանքի ռիսկը Հայաստանում մեծանա և ոչ էլ նրան, որը չխթանի կամավորականության գործունեության զարգացմանը: Միաժամանակ ավելացրեց, որ հասարակական կազմակերպությունների 30%-ն է Հայաստանում, որ ֆինանսավորվում են, մեծ թվով կամավորական կազմակերպություններ վճարելու հնարավորություն չունեն և կարողանում եմ կամավոր աշխատել, բարեգործական ակցիաներ իրականացնել, խնդիրներ լուծել: Եվ օրենքի ընդունմամբ այդ ՀԿ-ների խնդիրը ինչպես եք դիտարկում: 5%-ի սահմանափակումը նրանց էլ է առնչվում, թե՝ ոչ: Նույնպես գտնում եմ, որ կարգավորման խնդիր կա և ողջունում եմ Ձեր առաջարկը:

Թ.Ավետիսյանը նշեց, որ ուսումնասիրել են բոլոր ներկայացված առաջարկությունները և դրանք խմբավորելուց հետո հաջորդ շաբաթվանից նախարարության մասնագիտական վարչությունը պատրաստ է աշխատանքային կարգով, նույնիսկ Խորհրդի անդամների գրասենյակներում մասնագիտական քննարկումներ անցկացնել, իսկ ֆինանսավորում չունենալը այս օրենքի կարգավորումից դուրս է:

Սուսաննա Թադևոսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունում շատ կան արտասահմանյան երկրներից կամավորական սկզբունքով աշխատող անձինք: Նախագծում ինչքանով է այն կարգավորված, քանի որ աշխատանքն իրականացվում է երեխաների և ընտանիքների հետ:

Նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանը նշեց, որ Նախագծի 5-րդ գլուխը նշված հարցադրումներին է վերաբերվում, որն էլ կոչվում է «Կամավոր աշխատանքի կազմակերպումն օտարերկյա պետություններում և օտարերկյա քաղաքացիների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում» և միաժամանակ նշեց, որ կարգավորման անհրաժեշտություն առաջանալու դեպքում կարող են ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Խորհրդի կողմից ներկայացված առաջարկություններն ամփոփաթերթում ներառելու Թամարա Աբրահամյանի հարցին ի պատասխան Նախագահը հավելեց, որ համապատասխան վարչությունը կպատրաստի ամփոփաթերթ՝ ներառելով Խորհդի կողմից ներկայացված բոլոր ընդունված և չընդունված առաջարկությունները:

Հարցի քննարկումն ավարտելուց հետո Նախագահի առաջարկով Խորհուրդը որոշեց ի գիտություն ընդունել նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանի կողմից օրենքի նախագծի ներկայացումը և ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ երեք օրվա ընթացքում առաջարկությունները ներկայացնելուց և ամփոփելուց հետո իրականացնել մասնագիտական քննարկում:

Այնուհետև խոսքը փոխանցվեց «Արազա» ԲՀԿ նախագահ Թամարա Աբրահամյանին:

2. Կայուն զբաղվածության պետական ակտիվ ծրագրերի շրջանակում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման մասնակցային մոնիթորինգի զեկույց

Անցնելով օրակարգի 2-րդ հարցին՝ «Արազա» ԲՀԿ նախագահ Թամարա Աբրահամյանը, մանրամասն ներկայացրեց իրենց կազմակերպության կողմից իրականացված Կայուն

զբաղվածության պետական ակտիվ ծրագրերի շրջանակում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման մասնակցային մոնիթորինգի զեկույցը, նշելով, որ ներկայացվող ուսումնասիրությունը իրականացրել է «Արազա» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Արազա) ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակում:

Ուսումնասիրության նպատակը մասնակցային մոնիթորինգի գործիքի կիրառմամբ ստանալ աշխատանք փնտրողների, զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկված անձանց, գործատուների, մասնագիտական ուսուցում իրականացնող կազմակերպությունների և Զբաղվածության տարածքային կենտրոնների աշխատակազմի անդամների գնահատականը 2015 և 2016թթ. Զբաղվածության կարգավորման ծրագրերից հինգի շրջանակում մատուցված ծառայությունների որակի և արդյունավետության վերաբերյալ:

Զբաղվածության կարգավորման ծրագրերի շրջանակում մատուցվող ծառայությունների կատարողականի մասնակցային մոնիթորինգը իրականացվել է դիտարկման և գնահատման գործընթացում ծառայություն մատուցողների և ստացողների, ինչպես նաև ՔՀԿ-ների ներգրավմամբ: Ուսումնասիրությունն իրականացվել է ոչ թե քանակական, այլ որակական հարցման մեթոդով:

Հետազոտությունն իրականացվել է նաև ոլորտը կարգավորող իրավական հիմքերի, հաշվետվությունների, ծրագրերի, պետական զբաղվածության ռազմավարության փաստաթղթերի ուսումնասիրության մասով:

Այնուհետև Թամարա Աբրահամյանը ներկայացրեց զբաղվածության կարգավորման 2015 և 2016թթ.-ի մոնիթորինգի թիրախ ծրագրերի ուսումնասիրության շրջանակում բացահայտված խնդիրները:

- Նշվեց, որ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տարեց-տարի փոխվում են ծրագրերի գնահատման մեթոդաբանությունն ու ցուցանիշները: Դա բավական լուրջ խնդիրներ է առաջացնում տարբեր տարիների ցուցանիշները համադրելու հնարավորության տեսանկյունից:
- ՀՀ Զբաղվածության կարգավորման ծրագրերի և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի գնահատման նախորդ տարվա մոնիթորինգի արդյունքները վերլուծվում և ամփոփվում են նույն ժամանակահատվածում, երբ մշակվում են հաջորդ տարվա ծրագրերը:
- ՀՀ ԱՍՀՆ-ի, ԱՎԾ-ի, ԶՊԾ-ի և Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի փաստաթղթերն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույն թիրախ խմբի վերաբերյալ, նույն ժամանակահատվածի համար հրապարակած նույն բնույթի ցուցանիշների միջև կան էական տարբերություններ: Առկա է նաև անգամ նույն կառույցի կողմից ամսական և տարեկան կտրվածքով ներկայացված ցուցանիշների անհամադրելիության խնդիրը: Դա է փաստում նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական գործակալության» կողմից 2016 թվականին կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:
- Կառավարության որոշմամբ հաստատված Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի ֆինանսական հատկացումներ չնախատեսելը, կամ ծրագրերի կասեցումն առանց իրավական հիմքերի:

- Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերում սահմանված կատարողական ցուցանիշներն ավելի ցածր են, քան իրական կատարողական արդյունքները:

Զբաղվածության ծրագրերի մշտադիտարկումն ակնհայտ ցույց է տալիս, որ առավել արդյունավետ են մոնիթորինգի թիրախ հետևյալ ծրագրերը.

1) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում
2) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում
3) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում ծրագրերը:

Այս խնդիրներն ուսումնասիրելով ոլորտում բացահայտված են ծառայությունների որակի վրա ազդող իրավական, համակարգային և կազմակերպական մակարդակի խնդիրները:

Իրավական մակարդակ՝

1) «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրառման կարգերի բարեփոխումների անհամապատասխանությունը օրենքով ամրագրված շահառուների իրավունքների և շահերի պաշտպանության երաշխիքներին և Զբաղվածության 2013-2018թթ ռազմավարության միջոցառումների պլանի նպատակադրումներին,
2) «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրառման կարգերի բարեփոխումների արդյունքում շահառուների շահերի և իրավունքների պաշտպանության սահմանափակում և վատթարացում:

Համակարգային մակարդակ՝

1) Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի իրականացման կարգերի հաճախակի փոփոխությունները հանգեցնում են ԶՏԿ աշխատակազմի անդամների և շահառուների կողմից դրանց ընկալման, յուրացման և պրակտիկ աշխատանքում կիրառման խոչընդոտների,
2) Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի պահանջարկ-առաջարկի անհամապատասխանությունն այդ թվում ըստ տարածքային առանձնահատկությունների և հատկացվող ռեսուրսի սահմանափակությունը բացասաբար են անրադառնում դրանց արդյունավետության վրա, զբաղվածության մակարդակի բարելավման տեսանկյունից:
3) Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի գնահատման մեթոդաբանության ու ցուցանիշների հաճախակի փոփոխությոաններն առաջացնում են ցուցանիշների համադրելիության խնդիր, խոչընդոտում ոլորտի վիճակի օբյեկտիվ գնահատման հնարավորությանը

Կազմակերպական մակարդակ՝

1) Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի մշակման գործընթացում չի ապահովվում՝ նախորդ տարվա ծրագրերի կատարողականի արդյունքների և մոնիթորինգի արդյունքների վրա հիմնված առաջարկների վերլուծությամբ առաջնորդվելու պարտադիր սկզբունքը
2) Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերի ֆինանսական հատկացումների խախտումը և դրանց անհիմն կասեցումը
3) Ոլորտի բարեփոխումներին համահունչ ԶՏԿ աշխատակազմի անդամների վերապատրաստման և հմտությունների զարգացման ցածր մակարդակ

4) Հանրության իրազեկման նպատակին ծառայող տեղեկատվական միջոցների անկատարություն:

Նախարարը նշեց, որ գնահատելով կատարված աշխատանքը, պետք է ասել, որ ներկայացված վերլուծությունների արդյունքում կատարված եզրակացությունները հիմնավոր չեն և այդ ձևաչափով չենք կարող արդյունք ստեղծել: Երբ որ խոսում ենք արդյունք ստեղծելու մասին, դա ոչ միայն լիազոր մարմնի կողմից քաղաքականության իրականացումն է, այլ նաև այս քննարումներն ու Խորհրդի անդամների կառուցողական մասնակցությունն, ընդ որում՝ ավելացած կամ հավելյալ արժեք ստեղծելու առումով: Խնդիրներին անդրանդառնալով պետք է բերել կոնկրետ, առարկայական, հիմնավորված կարծիք, ինչպես նաև կոնկրետ ու կառուցողական առաջարկություններ խնդիրների արդյունավետ և իրավական մակարդակով լուծման համար:

Անդրադառնալով Թամարա Աբրահամյանի կողմից ներկայացված զեկույցին՝ նախարարի տեղակալ Ս .Հարությունյանը նշեց. որ զեկույցում արծարծված ուսումնասիրության արդյունքներին և ձևաչափին չպետք է խիստ վերաբերվել, որովհետև մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը վերջին տարիներին իրոք փոխվել է և դինամիկայով չենք կարողանում դրանք համեմատել և ցուցանիշների համադրելիության խնդիրն առկա է իրականում: Սակայն այդ մեթոդաբանության փոփոխությունը բոլորորվին խոչընդոտ չի հանդիսանում, որպեսզի յուրաքանչյուր տարվա ծրագրերի արդյունավետությունը գնահատենք և մեր առաջարկությունները ներկայացնենք:

Հարկ եմ համարում տեղյակ պահել նաև, շարունակեց տիկին Հարությունյանը, որ չնայած դրամաշնորհային ծրագրի ֆինանսական միջոցների սահմանափակությանը մեր առաջարկով կազմակերպության կողմից ավելացվել է ինչպես, մոնիթորինգի ենթարկված ծրագրերի քանակը, այնպես էլ դրանց աշխարհագրությունը:

Ինչ վերաբերում է մասնագիտական ուսուցման ծրագրերին, նույն մտահոգությունն առկա էր 2014թ. գնահատման արդյունքներով, աշխատանքի տեղավորման մակարդակն էր շատ ցածր, կայուն զբաղվածության ցուցանիշը և այլն: Սակայն 2016թ. ցուցանիշները գնահատման արդյունքներով բավականին բարձր էր, որը որպես դրական փաստ պետք է արձանագրել: Ինչ վերաբերվում է օրենսդրության վերաբերյալ կազմակերպության կողմից կատարած դիտարկումներին՝ իհարկե փոխոխություններ պետք է լինեն օրենսդրության մեջ: Կազմակերպության կատարած ուսումնասիրությունն ավելի ողջունելի կլիներ, եթե գնահատվեր այն հանգամանքը, որ այդ փոփոխությունները ինչ բացասական ազդեցություն են ունեցել կոնկրետ ծրագրերի իրականացման և շահառուների տեսանկյունից: Քանի որ ներկայումս կարևոր հանգամանք է դիտարկվում հեռանկարային զարգացման ծրագրով զբաղվածության ապահովումը, ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխությունները և նաև աշխատունակ անդամներին դեպի զբաղվածության ոլոտ ուղղորդելը, զբաղվածության ակտիվ ծրագրերում նրանց ընդգրկելու գործընթացի խթանելը, վերջիներիս մոտիվացիան մեծացնելը: Ինչ վերաբերվում է տեղեկատվության անճշտություններին, ապա փաստ է, որ «Գործ» հանակարգը լիարժեք չի գործում և այնտեղ ոչ բոլոր ծրագրերի ցուցանիշների վերաբերյալ է, որ առկա է անհրաժեշտ տեղեկատվություն ու նույն խնդրին մենք էլ ենք առնչվում: Հույս ունենք, որ «Այ Բի Էմ » համակարագի շրջանակներում այս խնդիրը կկարգավորվի և մենք նույն ցուցանիշի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվություն չենք ստանա:

Նախարարի տեղակալ Ս. Հարությունյանն առաջարկեց շարունական քննարկումների արդյունքում լրամշակել նախագիծը և ներկայացնել հանրությանը:

Ամփոփելով հարցի քննարկումը, նախագահողը նշեց, որ ցանկացած ծրագիր գնահատելիս պետք է ելնել դրա նպատակից, քանի որ նպատակից կախված ծրագիրը կարող

է ունենալ տարբեր արդյունավետություն: Մենք պետք է ծրագրի նպատակի հարցում նույն դաշտում գտնվենք, որպեսզի դրա արդյունավետության գնահատումը լինի ավելի օբյեկտիվ: Նախագահողը միաժամանակ նշեց, որ զեկույցը մանրամասն կուսումնասիրվի, և երկօրյա ժամկետում նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության ու զբաղվածության պետական ծառայության մասնագետները կներկայացնեն իրենց առաջարկությունները, առարկություններն ու հիմնավորված դիտարկումները բարձրացված բոլոր հարցադրումների վերաբերյալ՝ դրանք զեկույցի վերախմբագրված տարբերակում հաշվի առնելու համար, ինչպես նաև կմասնակցեն զեկույցի հանրային քննարկումներին:

3. Այլ հարցեր

Օրակարգի այլ հարցերի մասով նախագահողը նշեց, որ ինչպես գիտեք խորհրդի երկամյա գործունեության ծրագրի 5-րդ կետով նախատեսվում է խորհրդի անդամների կողմից իրենց գործունեության, իրականացվող ծրագրերի, կատարված հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների ներկայացում խորհրդի նիստերին:

Այդ կապակցությամբ աշխատանքները հստակ կազմակերպելու և անհրաժեշտ նյութերը խորհրդի անդամներին ժամանակին տրամադրելու համար, նպատակահարմար է և առաջարկվում է, որ խորհրդի յուրաքանչյուր նիստի ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվի, թե խորհրդի հաջորդ նիստին խորհրդի որ անդամը հաղորդում կներկայացնի, ծրագրի 5-րդ կետին համապատասխան:

Նիստի ավարտին որոշում կայացվեց կազմել արձանագրության նախագիծ և խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ **Զ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**